



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 հունիսի 2012թվականի N 178-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 069-003
ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԻ ՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի
հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային
համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, 069-003 ծածկագրով հողամասի մի մասի՝
20.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ պետականորեն գրանցել համայնքի
սեփականության իրավունքը՝ վերջինս ընդգրկելով Բնակավայրերի հողերի ընդհանուր
օգտագործման հողերի կազմում: Նշված հողամասը հանդիսանում է համայնքի
սեփականությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի
հուլիսի 21-ի թիվ 1767-Ն որոշման, ըստ համայնքի կադաստրային քարտեզի ընդգրկված է
«Բնակավայրերի հողերի» այլ հողերի կազմում /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56 հոդվածի, ինչպես նաև
Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման
պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 38 հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված «Բնակավայրերի
հողերի» 069-003 ծածկագրով հողամասի մի մասին՝ 20.0քմ մակերեսով հողամասին տալ նոր
հասցե՝ Շամախյան փողոց թիվ 3ա/13:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր
պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում, ըստ Դիլիջանի համայնքի հողերի
կադաստրային քարտեզի 069-003 ծածկագրով հողամասի մի մասի՝ 20.0քմ մակերեսով
հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու
նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 հունիսի 2012 թվականի N 179-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի «ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԻ
ԳԵՏԱՓԻՆՅԱ ՓՈՂՈՑԻ 80/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՐԱՆՏ
ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ 20.0ՔՄ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 397 ՈՐՈՇՈՒՄԸ
ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2008 թվականի հունիսի 18-ի «Դիլիջան քաղաքի Գետափինյա
փողոցի 80/1 հասցեում կառուցապատման իրավունքով Հրանտ Կարապետյանին 20.0քմ
հողամաս տրամադրելու մասին» թիվ 397 որոշումը դեռևս չի կիրառվել և դրանով նախատեսված
պահանջները աննպատակահարմար են ներկայումս կիրառել:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 75 հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2008 թվականի հունիսի 18-ի «Դիլիջան քաղաքի Գետափինյա
փողոցի 80/1 հասցեում կառուցապատման իրավունքով Հրանտ Կարապետյանին 20.0քմ
հողամաս տրամադրելու մասին» թիվ 397 որոշումը չեղյալ ճանաչել:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. հունիսի 01
ք. Դիլիջան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 հունիսի 2012թվականի N 180-Ա

ԱՌԱՋԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴԻԼԻՋԱՆԻ ԱԹԱՐԲԵԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 2 ՀԱՍՑԵԻ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետին է դիմել քաղ. Սուրեն Բայրամյանը Աթարբեկյան փողոցի թիվ 2 հասցեի, իր սեփականությունը հանդիսացող տնամերձ հողամասի սահմանները ճշտելու և հաստատված հատակագիծ տրամադրելու խնդրանքով:

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ ըստ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերի, նշված տնամերձ հողամասի չափը կազմում է 465.0քմ:

Կատարված տեղագնման և չափագրման արդյունքում կազմված սխեմայի համաձայն նշված հողամասի փաստացի չափը կազմում է 376.0քմ: Չափի փոփոխման հարցում քաղ. Սուրեն Բայրամյանը առարկություն չունի /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/: Նշված տնամերձ հողամասում առկա է բնակելի տան ինքնակամ կցակառուցումներ, որոնց շինարարական աշխատանքներն իրականացվել են մինչև 2001 թվականը /առկա է թաղային կոմիտեի տեղեկանքը/:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1998թ. դեկտեմբերի 31-ի թիվ 867 որոշման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել Դիլիջանի Աթարբեկյան փողոցի թիվ 2 հասցեի տնամերձ հողամասի գլխավոր հատակագիծը՝ 376.0քմ մակերեսով, քաղ. Սուրեն Բայրամյանի սեփականության իրավունքով:
2. Տնամերձ հողամասում առկա բնակելի տան ինքնակամ կցակառուցումները համարել օրինական՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 22.1 կետի համաձայն:
3. Պարտավորեցնել Սուրեն Բայրամյանին.
 - 1) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ նշված անշարժ գույքի նկատմամբ

սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. հունիսի 01

ք.Դիլիջան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 հունիսի 2012 թվականի N 181-Ս

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 314-005
ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԻ ՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ


Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի
հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային
համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, 314-005 ծածկագրով հողամասի մի մասի՝
20.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ պետականորեն գրանցել համայնքի
սեփականության իրավունքը՝ վերջինս ընդգրկելով Բնակավայրերի հողերի հասարակական
կառուցապատման հողերի կազմում: Նշված հողամասը հանդիսանում է համայնքի
սեփականությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 հուլիսի
21-ի թվականի թիվ 1767-Ն որոշման, ըստ համայնքի կադաստրային քարտեզի ընդգրկված է
«Բնակավայրերի հողերի» կազմում /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:
Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56 հոդվածի, ինչպես նաև
Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման
պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 38 հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված «Բնակավայրերի
հողերի» 314-005 ծածկագրով հողամասի մի մասին՝ 20.0քմ մակերեսով հողամասին տալ նոր
հասցե՝ Մաքսիմ Գորկու փողոց թիվ 1/1:
2. Նշված 20.0քմ հողամասն ընդգրկել Բնակավայրերի հողերի հասարակական
կառուցապատման հողերի ֆոնդում:
3. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր
պետական կոմիտեի սպասարկման գրասենյակ, ըստ Դիլիջանի համայնքի հողերի
կադաստրային քարտեզի 314-005 ծածկագրով հողամասի մի մասի՝ 20.0քմ մակերեսով
հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու
նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 հունիսի 2012 թվականի N 182-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ԳԵՏԱՓՆՅԱ ՓՈԴՈՑԻ ԹԻՎ 3/7 ՀԱՍՑԵԻ 70.0ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ԸՆԴԱՅՆՄԱՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերի տվյալների համաձայն՝ սեփականության իրավունքի վկայական թիվ 2057051 տրված 16.12.2008թ., Դիլիջանի Գետափնյա փողոցի թիվ 3/6 հասցեի արհեստանոցը 70.0քմ սպասարկման հողամասով պատկանում է քաղ. Ռուբեն Սերգոյի Վարդանյանին: Վերջինս դիմել է քաղաքապետարան՝ նշված արհեստանոցի սպասարկման հողամասին կից, Գետափնյա փողոցի թիվ 3/7 հասցեի 70.0քմ հողամասը ընդլայնման կարգով իրեն օտարելու խնդրանքով: Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ նշված հողամասի օտարումն աճուրդային կարգով կխոչընդոտի անձի իրավունքը և օրենքով պահպանվող շահերը, այն նպատակահարմար է օտարել ընդլայնման կարգով, նշված արհեստանոցի սեփականատեր Ռուբեն Վարդանյանին: Վերոգրյալ 70.0քմ հողամասը չի համարվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով առաջադրված հողամաս, չի գտնվում ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է Բնակավայրերի հողերի տարածագնահատման իններորդ գոտում: Նշված 70.0քմ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը գրանցված է և տրված է սեփականության վկայական թիվ 18052012-11-0008: Համայնքի ավագանին 2012թ. մայիսի 23-ի թիվ 80 որոշմամբ համաձայնություն է տվել նշված 70.0քմ հողամասն ընդլայնման կարգով քաղ. Ռուբեն Վարդանյանին օտարելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը: Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թ. մայիսի 8-ի թիվ 714-Ն որոշման 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66 հոդվածի պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի 12-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի Գետափնյա փողոցի թիվ 3/6 հասցեի արհեստանոցի սպասարկման հողամասին կից գտնվող, Գետափնյա փողոցի թիվ 3/7 հասցեի 70.0քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով /ընդլայնման կարգով/ օտարել քաղ. Ռուբեն Վարդանյանին: Հողամասի արժեքը կազմում է

133980 դրամ:

2. Քաղաքացու հետ կնքել հողի առքուվաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման:

3. Պարտավորեցնել քաղ. Ռուբեն Վարդանյանին.

1) Դիլիջանի քաղաքապետարանի 900405051104 հաշվարկային հաշվին մուծել հողամասի կադաստրային արժեքը՝ 133980 դրամ, վերջինիս մուծման անդորրագիրը սույն որոշման անբաժանելի մասն է:

2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. հունիսի 01
ք.Դիլիջան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 հունիսի 2012 թվականի N 183-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ԻՎԱՆՈՎԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 41/1 ՀԱՍՑԵԻ 100.0ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ԸՆԴԱՅՆՄԱՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերի տվյալների համաձայն՝ սեփականության իրավունքի վկայական թիվ 04052012-11-0037, Դիլիջանի Իվանովի փողոցի թիվ 41 հասցեի անասնաշենքը 101.0քմ սպասարկման հողամասով պատկանում է քաղ. Արմեն Նորիկի Պապյանին: Վերջինս դիմել է քաղաքապետարան՝ նշված անասնաշենքի սպասարկման հողամասին կից, Իվանովի փողոցի թիվ 41/1 հասցեի 100.0քմ հողամասը ընդլայնման կարգով իրեն օտարելու խնդրանքով:

Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ նշված հողամասի օտարումն աճուրդային կարգով կիսոյնդոտի անձի իրավունքը և օրենքով պահպանվող շահերը, այն նպատակահարմար է օտարել ընդլայնման կարգով, նշված անասնաշենքի սեփականատեր Արմեն Պապյանին: Վերոգրյալ 100.0քմ հողամասը չի համարվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով առաջադրված հողամաս, չի գտնվում ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է Բնակավայրերի հողերի տարածագնահատման տասներորդ գոտում: Նշված 100.0քմ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը գրանցված է և տրված է սեփականության վկայական թիվ 18052012-11-0017: Համայնքի ավագանին 2012թ. մայիսի 23-ի թիվ 79 որոշմամբ համաձայնություն է տվել նշված 100.0քմ հողամասն ընդլայնման կարգով քաղ. Արմեն Պապյանին օտարելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թ. մայիսի 8-ի թիվ 714-Ն որոշման 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66 հոդվածի պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի 12-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի Իվանովի փողոցի թիվ 41 հասցեի անասնաշենքի սպասարկման հողամասին կից գտնվող, Իվանովի փողոցի թիվ 41/1 հասցեի 100.0քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով /ընդլայնման կարգով/ օտարել քաղ. Արմեն Պապյանին: Հողամասի արժեքը կազմում է 124200

դրամ:

2. Քաղաքացու հետ կնքել հողի առքուվաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման:

3. Պարտավորեցնել քաղ. Արմեն Պապյանին.

1) Դիլիջանի քաղաքապետարանի 900405051104 հաշվարկային հաշվին մուծել հողամասի կադաստրային արժեքը՝ 124200 դրամ, վերջինիս մուծման անդորրագիրը սույն որոշման անբաժանելի մասն է:

2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎՅՐ



ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. հունիսի 01

ք.Դիլիջան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 հունիսի 2012թվականի N 184-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ԿԱԼԻՆԻՆԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 235/4 ՀԱՍՑԵՌՈՒՄ, ՔԱՂ. ՎԱՐԴԱՆ ԹԱՄՐԱԶՅԱՆԻ
ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2012թ. մայիսի 11-ի թիվ 156 որոշմամբ օրինական է ճանաչվել համայնքի սեփականությունը հանդիսացող, Կալինինի փողոցի թիվ 235/4 հասցեի 21.3քմ հողամասում, քաղ. Վարդան Հայկազի Թամրազյանի կողմից ինքնակամ կառուցված շինությունը, մասնավորապես՝ 21.3քմ մակերեսով ավտոտնակը /հաշվարկված է արտաքին չափերով/:

Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղաքացուն՝ վերոհիշյալ ինքնակամ շինությունը ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:

Համայնքի ավագանին 2012թ. մայիսի 23-ի թիվ 77 որոշմամբ համաձայնություն է տվել նշված շինությունը քաղ. Վարդան Թամրազյանին օտարելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությունը:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման IV հոդվածի պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի 12-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի համայնքի սեփականությունը հանդիսացող, Կալինինի փողոցի թիվ 235/4 հասցեի 21.3քմ հողամասը և ինքնակամ կառուցված շինությունը, մասնավորապես՝ 21.3քմ մակերեսով ավտոտնակը օտարել քաղ. Վարդան Թամրազյանին, հետևյալ արժեքներով.

- ավտոտնակ՝ 21.3 քմ – 36 210 դրամ,

- հողամաս՝ 21.3 քմ - 40 769 դրամ:

2. Կնքել հողի և շինության առուվաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման:

3. Պարտավորեցնել քաղ. Վարդան Թամրազյանին.

1) Դիլիջանի քաղաքապետարանի 900405051104 հաշվարկային հաշվին մուծել 40769դրամ, 900405051690 հաշվարկային հաշվին՝ 36210 դրամ, վերջիններին մուծման անդորրագրերը սույն որոշման անբաժանելի մասն են:

2) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի

կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում՝ նշված հողամասի և շինության նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:
3) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՅՈՒՄ

ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. հունիսի 01
ք. Դիլիջան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Սյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
diliban1@yahoo.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 հունիսի 2012 թվականի N 185-Ս

ԴԻԼԻՋԱՆԻ ԿԱԼԻՆԻՆԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 241/3 ՀԱՍՑԵՈՒՄ, ՔԱՂ. ՍԵՂԱ ՊԱՊՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ
ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2012թ. մայիսի 11-ի թիվ 157 որոշմամբ օրինական է ճանաչվել համայնքի սեփականությունը հանդիսացող, Կալինինի փողոցի թիվ 241/3 հասցեի 31.5քմ հողամասում, քաղ. Սեղա Բաբկենի Պապյանի կողմից ինքնակամ կառուցված շինությունը, որը բաղկացած է 31.5քմ մակերեսով նկուղից և 31.5քմ մակերեսով ավտոտնակից /հաշվարկված է արտաքին չափերով/:

Գրավոր առաջարկություն է ներկայացվել քաղաքացուն՝ վերոհիշյալ ինքնակամ շինությունը ձեռք բերելու նպատակով: Վերջինս տվել է իր համաձայնությունը:

Համայնքի ավագանին 2012թ. մայիսի 23-ի թիվ 76 որոշմամբ համաձայնություն է տվել նշված շինությունը քաղ. Սեղա Պապյանին օտարելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման IV հոդվածի պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի 12-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի համայնքի սեփականությունը հանդիսացող, Կալինինի փողոցի թիվ 241/3 հասցեի 31.5քմ հողամասը և ինքնակամ կառուցված շինությունը, մասնավորապես՝ 31.5քմ նկուղով 31.5քմ մակերեսով ավտոտնակը օտարել քաղ. Սեղա Պապյանին, հետևյալ արժեքներով.

- նկուղ՝ 31.5 քմ – 107100 դրամ
- ավտոտնակ՝ 31.5 քմ – 53550 դրամ,
- հողամաս՝ 31.5 քմ - 60291 դրամ:

2. Կնքել հողի և շինության առուվաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման:


3. Պարտավորեցնել քաղ. Սեղա Պապյանին.

1) Դիլիջանի քաղաքապետարանի 900405051104 հաշվարկային հաշվին մուծել 60291 դրամ, 900405051690 հաշվարկային հաշվին՝ 160650 դրամ, վերջիններիս մուծման անդորրագրերը սույն որոշման անբաժանելի մասն են:

2) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում՝ նշված հողամասի և շինության նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

3) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. հունիսի 01
ք.Դիլիջան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 հունիսի 2012 թվականի N 186-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ
“ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻԳ” 1279.0 ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 2 ՀՈՂԱՄԱՍԵՐԻ
ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄՐԳՈՒՅԹ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի 2012 թ. մայիսի 11-ի թիվ 158 որոշման համաձայն՝ համայնքի ավագանու քննարկմանն էր ներկայացվել Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող “Բնակավայրերի հողերից” 1279.0 քմ ընդհանուր մակերեսով թվով 2 հողամասերը մրցույթի միջոցով կառուցապատման իրավունքով տրամադրելու և մեկնարկային գինը սահմանելու մասին հարցը՝ կից աղյուսակում ներկայացված մրցութային լոտերով, մակերեսներով, պայմաններով և տարեկան վճարի մեկնարկային գներով: Վերջինս հաստատվեց համայնքի ավագանու 2012 թ. մայիսի 23-ի թիվ 82 որոշմամբ:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 74-րդ հոդվածի պահանջները և ղեկավարվելով “Տեղական ինքնակառավարման մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 12-րդ կետի պահանջներով՝


ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Սույն թվականի հունիսի 5-ից հայտարարել Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող “Բնակավայրերի հողերից” 1279.0 քմ ընդհանուր մակերեսով թվով 2 հողամասերի կառուցապատման իրավունքի մրցույթ՝ համաձայն կից աղյուսակի:
2. Մրցույթի օր նշանակել 2012 թվականի հունիսի 6-ը:
3. Քաղաքապետարանի հողամասերի մրցութային հանձնաժողովին հանձնարարել.
 - 1) սահմանել կառուցապատման իրավունքի մրցույթի պայմանները,
 - 2) հողամասի մրցութային փաթեթում ներառել նախատեսվող շինարարության համար “Ճարտարապետահատակագծային առաջադրանքը”,
 - 3) նախատեսվող մրցույթի վերաբերյալ հայտարարությամբ հանդես գալ “Հայաստանի Հանրապետություն” օրաթերթում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՐՄԵՆ ՍԱԼԹՐՈՍՅԱՆ

2012 թ. հունիսի 04 ք. Դիլիջան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 հունիսի 2012թվականի N 187-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ
“ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ” 2592.0ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 5 ՀՈՂԱՄԱՍԵՐԻ
ԱՃՈՒՐԴ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի 2012թ. մայիսի 11-ի թիվ 159 որոշման համաձայն՝ համայնքի ավագանու քննարկմանն էր ներկայացվել Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող “Բնակավայրերի հողերից” 2592.0քմ ընդհանուր մակերեսով թվով 5 հողամասերը աճուրդի միջոցով օտարելու և դրանց մեկնարկային գները հաստատելու մասին հարցը՝ կից աղյուսակում ներկայացված աճուրդային լոտերով, մակերեսներով, պայմաններով և մեկնարկային գներով: Վերջիններս հաստատվեցին համայնքի ավագանու 2012թ. մայիսի 23-ի թիվ 81 որոշմամբ:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67 և 68 հոդվածների պահանջները և ղեկավարվելով “Տեղական ինքնակառավարման մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 12-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. 2012 թվականի հունիսի 5-ից հայտարարել Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող “Բնակավայրերի հողերից” 2592.0քմ ընդհանուր մակերեսով թվով 5 հողամասերի աճուրդ՝ համաձայն կից աղյուսակի:
2. Աճուրդի օր նշանակել 2012 թվականի հունիսի 9-ը:
3. Քաղաքապետարանի հողամասերի աճուրդային հանձնաժողովին հանձնարարել.
 - 1) սահմանել աճուրդի պայմանները,
 - 2) հողամասի աճուրդային փաթեթում ներառել նախատեսվող շինարարության համար “Ճարտարապետահատակագծային առաջադրանքները”,
 - 3) նախատեսվող աճուրդի վերաբերյալ հայտարարությամբ հանդես գալ “Հայաստանի Հանրապետություն” օրաթերթում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ym

ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 հունիսի 2012 թվականի N 188-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 141-001 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԻ ՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, 141-001 ծածկագրով հողամասի մի մասի՝ 20.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ պետականորեն գրանցել համայնքի սեփականության իրավունքը՝ վերջինս ընդգրկելով Բնակավայրերի հողերի բնակելի կառուցապատման հողերի կազմում: Նշված հողամասը հանդիսանում է համայնքի սեփականությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի թիվ 1767-Ն որոշման, ըստ համայնքի կադաստրային քարտեզի ընդգրկված է «Բնակավայրերի հողերի» կազմում /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:


Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված «Բնակավայրերի հողերի» 141-001 ծածկագրով հողամասի մի մասին՝ 20.0քմ մակերեսով հողամասին տալ նոր հասցե՝ Գետափնյա փողոց թիվ 80/1:
2. Նշված 20.0քմ հողամասը ընդգրկել Բնակավայրերի հողերի բնակելի կառուցապատման հողերի ֆոնդում:
3. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում, ըստ Դիլիջանի համայնքի հողերի կադաստրային քարտեզի 141-001 ծածկագրով հողամասի մի մասի՝ 20.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

04 հունիսի 2012թվականի N 189-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ԱՅԳԵՍՏԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 2Բ ՀԱՍՑԵԻ ՇԵՆՔԻՆ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՈՒՄ, ՔԱՂԱԼԲԵՐՏ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՄԲ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ Դիլիջանի Այգեստան փողոցի թիվ 2բ հասցեի շենքին հարակից տարածքում, համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերի» 053-050 ծածկագրով հողում քաղ. Ալբերտ Հայկի Մարտիրոսյանի կողմից կառուցված են ինքնակամ շինություններ մասնավորապես՝ 27.5քմ և 3.0քմ մակերեսներով մառաններ /հաշվարկված է արտաքին չափերով/ 87.0քմ ինքնակամ զբաղեցրած հողամասով /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 188 հոդվածի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին 2005թ. հոկտեմբերի 4-ին ընդունված Հայաստանի Հանրապետության օրենքի 21 հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշման պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղ. Ալբերտ Մարտիրոսյանի կողմից ինքնակամ կառուցված շինություններին և 87.0քմ ինքնակամ զբաղեցրած հողամասին տալ նոր հասցե Այգեստան փողոց թիվ 2բ/2:
2. Վերը նշված ինքնակամ շինությունների նկատմամբ ճանաչել Դիլիջան համայնքի սեփականության իրավունքը:
3. Սույն որոշումը՝ կից հատակագծով, ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի սպասարկման գրասենյակ, նշված անշարժ գույքի նկատմամբ Դիլիջան համայնքի սեփականության իրավունքը գրանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. հունիսի 04թ. Դիլիջան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 հունիսի 2012թվականի N 190-Ա

ԱՌԱՋԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ
ԴԻԼԻՋԱՆԻ ԿԱՍՈ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 130 ՀԱՍՑԵԻ ՏՆԱՄԵՐԶ ՀՈՂԱՄԱՍԻ ԳԼԽԱՎՈՐ
ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն 2008թ. սեպտեմբերի 16-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի, Դիլիջանի Կամո 130 հասցեի բնակելի տան և տնամերձ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռք է բերել քաղ. Սաթենիկ Գրիգորյանը: Վերջինս դիմել է քաղաքապետին նշված տնամերձ հողամասի սահմանները ճշտելու և հաստատված հատակագիծ տրամադրելու խնդրանքով:

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ ըստ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերի, նշված տնամերձ հողամասի չափը կազմում է 1400.0քմ: Կատարված տեղագնման և չափագրման արդյունքում կազմված սխեմայի համաձայն նշված հողամասի փաստացի չափը կազմում է 1196.0քմ: Չափի փոփոխման հարցում քաղ. Սաթենիկ Գրիգորյանը առարկություն չունի /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/: Նշված տնամերձ հողամասում առկա է բնակելի տան ինքնակամ կցակառուցումներ, որոնց շինարարական աշխատանքներն իրականացվել են մինչև 2001 թվականը /առկա է թաղային կոմիտեի տեղեկանքը/:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1998թ. դեկտեմբերի 31-ի թիվ 867 որոշման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով “Տեղական ինքնակառավարման մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել Դիլիջանի Կամո փողոցի թիվ 130 հասցեի տնամերձ հողամասի գլխավոր հատակագիծը՝ 1196.0քմ մակերեսով, քաղ. Սաթենիկ Գրիգորյանի սեփականության իրավունքով:
2. Տնամերձ հողամասում առկա բնակելի տան ինքնակամ կցակառուցումները համարել օրինական՝ ՀՀ կառավարության 18 մայիսի 2006թ. թիվ 912-Ն որոշման 22.1 կետի համաձայն:
3. Պարտավորեցնել Սաթենիկ Գրիգորյանին:

- 1) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ նշված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:
- 2) “Տեղական տուրքերի և վճարների մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. հունիսի 05թ. Դիլիջան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
diliban1@yahoo.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 հունիսի 2012 թվականի N 191-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՕՐԶՈՆԻԿԻԶԵ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 67/4 ՀԱՍՑԵԻ 20.0ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ
ՔԱՂ. ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքապետարան է դիմել քաղ. Կարեն Ալեքսանդրի Մանուկյանը՝ Օրջոնիկիձե փողոցի թիվ 67/4 հասցեի 20.0քմ հողամասը, ավտոտնակ կառուցելու նպատակով, կառուցապատման իրավունքով իրեն տրամադրելու խնդրանքով:

Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ Օրջոնիկիձե փողոցի թիվ 67/4 հասցեի 20.0քմ հողամասը, ըստ հողի նպատակային նշանակության, գտնվում է համայնքի “Բնակավայրերի հողերի” կազմում: Նշված հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցված է /սեփականության վկայական 04062012-11-0061/:

Հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին, Օրջոնիկիձե փողոցի թիվ 67/4 հասցեի 20.0քմ հողամասը, կառուցապատման իրավունքով, 20 տարի ժամկետով տրամադրել քաղ. Կարեն Մանուկյանին:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. ապրիլի 27-ի թիվ 844-Ն որոշման, Դիլիջան համայնքի ավագանու 2009թ. ապրիլի 28-ի թիվ 72-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության “Տեղական ինքնակառավարման մասին” օրենքի 32-րդ հոդվածի 12-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Օրջոնիկիձե փողոցի թիվ 67/4 հասցեի 20.0քմ հողամասը, ավտոտնակ կառուցելու նպատակով, կառուցապատման իրավունքով, տարեկան 20 000 դրամ վճարի չափով, 20 տարի ժամկետով տրամադրել քաղ. Կարեն Մանուկյանին:
2. Քաղաքացու հետ կնքել հողի կառուցապատման իրավունքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման: Երկամսյա ժամկետում պետական գրանցում չկատարելու դեպքում սույն որոշումը չեղյալ է ճանաչվում:
3. Տրամադրվող հողամասի կառուցապատման նպատակով, քաղաքացուն տրամադրել ճարտարապետահատակագծային առաջադրանք:

4. Պարտավորեցնել քաղ. Կարեն Մանուկյանին.

1) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ նշված հողամասի նկատմամբ կառուցապատման իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

2) Ավտոտեակի կառուցման նախագծային փաստաթղթերը կազմել Դիլիջանի համայնքի ղեկավարի կողմից հաստատված ճարտարապետահատակագծային առաջադրանքի պահանջներին համապատասխան և սահմանված ժամկետում:

3) “Տեղական տուրքերի և վճարների մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. հունիսի 05 ք.Դիլիջան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 հունիսի 2012 թվականի N 192-Ա

ԱՌԱՋԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴԻԼԻՋԱՆԻ
ՕՐՋՈՆԻԿԻՁԵ ՓՈՂՈՑԻ 2-ԲԴ ՆՐԲ. ԹԻՎ 7 ՀԱՍՑԵԻ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետին են դիմել քաղ. Ռազմիկ Գրիշայի Կարապետյանը՝ Օրջոնիկիձե փողոցի 2-րդ նրբ. թիվ 7 հասցեի, իր և քաղ. Կարեն Գրիշայի Կարապետյանի համասեփականությունը հանդիսացող տնամերձ հողամասի սահմանները ճշտելու և հաստատված հատակագիծ տրամադրելու խնդրանքով:

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ ըստ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերի, նշված տնամերձ հողամասի չափը կազմում է 650.0քմ: Կատարված տեղագնման և չափագրման արդյունքում կազմված սխեմայի համաձայն նշված հողամասի փաստացի չափը կազմում է 624.0քմ: Չափի փոփոխման հարցում համասեփականատերերը առարկություն չունեն /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/: Նշված տնամերձ հողամասում առկա է ինքնակամ կառուցված բնակելի տուն, որի շինարարական աշխատանքներն իրականացվել են մինչև 2001 թվականը /առկա է թաղային կոմիտեի տեղեկանքը/:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1998թ. դեկտեմբերի 31-ի թիվ 867 որոշման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով “Տեղական ինքնակառավարման մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

- Հաստատել Դիլիջանի Օրջոնիկիձե փողոցի 2-րդ նրբ. թիվ 7 հասցեի տնամերձ հողամասի գլխավոր հատակագիծը՝ 624.0քմ մակերեսով, քաղաքացիներ Ռազմիկ և Կարեն Կարապետյանների սեփականության իրավունքով:
- Տնամերձ հողամասում առկա ինքնակամ կառուցված բնակելի տունը համարել օրինական՝ ՀՀ կառավարության 18 մայիսի 2006թ. թիվ 912-Ն որոշման 22.1 կետի համաձայն:
- Պարտավորեցնել Ռազմիկ Կարապետյանին.
 - 1) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի

կադաստր պետական կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ նշված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

2) “Տեղական տուրքերի և վճարների մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. հունիսի 05 ք.Դիլիջան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilibjan1@yahoo.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 հունիսի 2012 թվականի N 193-Ա

ԱՌԱՋԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ
ԴԻԼԻՋԱՆԻ ԿԱՄԱՐԻՆԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 43 ՀԱՍՑԵԻ ՏՆԱՄԵՐԶ ՀՈՂԱՄԱՍԻ ԳԼԽԱՎՈՐ
ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն 2011թ. դեկտեմբերի 21-ի ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագրի, Դիլիջանի Կամարինի փողոցի թիվ 43 հասցեի բնակելի տան և տնամերձ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռք է բերել քաղ. Մերուժան Վարդգեսի Բալինյանը: Վերջինս դիմել է քաղաքապետին նշված տնամերձ հողամասի սահմանները ճշտելու և հաստատված հատակագիծ տրամադրելու խնդրանքով:

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ ըստ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերի, նշված տնամերձ հողամասի չափը կազմում է 647.0քմ: Կատարված տեղագնման և չափագրման արդյունքում կազմված սխեմայի համաձայն նշված հողամասի ներկայիս փաստացի չափը կազմում է 636.0քմ: Չափի փոփոխման հարցում քաղ. Մերուժան Բալինյանը առարկություն չունի /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/: Նշված տնամերձ հողամասում առկա է բնակելի տան ինքնակամ կցակառուցումներ և ինքնակամ կառուցված օժանդակ շինություններ, որոնց շինարարական աշխատանքներն իրականացվել են մինչև 2001 թվականը /առկա է թաղային կոմիտեի տեղեկանքը/:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1998թ. դեկտեմբերի 31-ի թիվ 867 որոշման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով “Տեղական ինքնակառավարման մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել Դիլիջանի Կամարինի փողոցի թիվ 43 հասցեի տնամերձ հողամասի գլխավոր հատակագիծը՝ 636.0քմ մակերեսով, քաղ. Մերուժան Բալինյանի սեփականության իրավունքով:
2. Տնամերձ հողամասում առկա բնակելի տան ինքնակամ կցակառուցումները և ինքնակամ կառուցված օժանդակ շինությունները համարել օրինական՝ ՀՀ կառավարության 18 մայիսի 2006թ. թիվ 912-Ն որոշման 22.1 կետի համաձայն:
3. Պարտավորեցնել Մերուժան Բալինյանին:

- 1) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ նշված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:
- 2) “Տեղական տուրքերի և վճարների մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. հունիսի 05 թ. Դիլիջան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Սյանիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 հունիսի 2012թվականի N 194-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2011Թ. ՄԱՐՏԻ 2-Ի ԹԻՎ 145 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի լրումն Դիլիջանի համայնքի ղեկավարի 2011թ. մարտի 2-ի “Դիլիջանի Օրջոնիկիձե փողոցի 2-րդ նրբ. թիվ 22 հասցեի բնակելի տան սպասարկման հողամասի փաստաթղթային հիմքերը վերականգնելու մասին” թիվ 145 որոշման և ղեկավարվելով “Իրավական ակտերի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի 70 հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2011թ. մարտի 2-ի “ Դիլիջանի Օրջոնիկիձե փողոցի 2-րդ նրբ. թիվ 22 հասցեի բնակելի տան սպասարկման հողամասի փաստաթղթային հիմքերը վերականգնելու մասին” թիվ 145 որոշման մեջ լրացնել. “Օրջոնիկիձե փողոցի 2-րդ նրբ. թիվ 22 հասցեի տնամերձ հողամասում կառուցված անասնաշենքի շինարարական աշխատանքներն իրականացվել են մինչև 2001թ. մայիս ամիսը, առանց քաղաքաշինական նորմերի էական խախտումների, վերջինս համարել օրինական ՀՀ կառավարության 18 մայիսի 2006թ. թիվ 912-Ն որոշման 22.1 կետի համաձայն” :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. հունիսի 06 ք. Դիլիջան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 հունիսի 2012 թվականի N 195-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 073-027
ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԻ ՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, 073-027 ծածկագրով հողամասի մի մասի՝ 500.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ պետականորեն գրանցել համայնքի սեփականության իրավունքը՝ վերջինս ընդգրկելով Բնակավայրերի հողերի բնակելի կառուցապատման հողերի կազմում: Նշված հողամասը հանդիսանում է համայնքի սեփականությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի թիվ 1767-Ն որոշման, ըստ համայնքի կադաստրային քարտեզի ընդգրկված է «Բնակավայրերի հողերի» կազմում /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի 2-րդ պարբերության 1-ին կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված «Բնակավայրերի հողերի» 073-027 ծածկագրով հողամասի մի մասին՝ 500.0քմ մակերեսով հողամասին տալ նոր հասցե՝ Այգեստան փողոց I նրբ. թիվ 13/1:
2. Նշված 500.0քմ հողամասը ընդգրկել Բնակավայրերի հողերի բնակելի կառուցապատման հողերի ֆոնդում:
3. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում, ըստ Դիլիջանի համայնքի հողերի կադաստրային քարտեզի 073-027 ծածկագրով հողամասի մի մասի՝ 500.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՐՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Սյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 հունիսի 2012թվականի N 196-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԲԱՅՕԹՅԱ ԱՌԵՎՏՈՒՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ՀԵՂՈՒԿ ՎԱՌԵԼԻՔԻ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՂՈՒԿՆԵՐԻ, ՀԵՂՈՒԿԱՑՎԱԾ ԳԱԶԵՐԻ ՎԱՃԱՌԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԸ ԲԱՎԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական տարածքում գործող Նունե Ղազարյան անհատ ձեռնարկատերը և «Մալյուտ» արտադրական կոոպերատիվը հայտ են ներկայացրել իրենց սեփական ձեռնարկատիրական օբյեկտներում բացօթյա առևտուր կազմակերպելու և հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառելու թույլտվություն ստանալու համար:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ սահմանված կարգը և ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի ժ) և դ) ենթակետերի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ և 7-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Բավարարել հայտը և «Մալյուտ» արտադրական կոոպերատիվին տալ հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների և հեղուկացված գազերի վաճառքի թույլտվություն 01 հունվարի 2012թ.-31 դեկտեմբերի 2012թ. ժամանակահատվածի համար


2. Բավարարել հայտը և Նունե Ղազարյան անհատ ձեռնարկատիրոջը տալ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվություն 07 հունիսի 2012թ.-ից-31 օգոստոսի 2012թ.-ը

3. Հանձնարարել համայնքի ղեկավարի աշխատակազմի ֆինանսական բաժնին. տուրքի գանձումները կատարել յուրաքանչյուր եռամսյակի համար՝ ըստ Դիլիջանի քաղաքային համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշմամբ հաստատված դրույքաչափերի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. հունիսի 06 ք. Դիլիջան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հունիսի 2012թվականի N 197-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 110-022 ԵՎ 110-014 ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՄԻ ՄԱՍԻ ՆԿԱՏԱՍՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, 110-022 և 110-014 ծածկագրերով հողամասերի մի մասի՝ 1373.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ պետականորեն գրանցել համայնքի սեփականության իրավունքը: Նշված հողամասը հանդիսանում է համայնքի սեփականությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի թիվ 1767-Ն որոշման, ըստ համայնքի կադաստրային քարտեզի ընդգրկված է «Բնակավայրերի հողերի» կազմում /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի 2-րդ պարբերության 1-ին կետի պահանջներով՝


ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված «Բնակավայրերի հողերի» 110-022 և 110-014 ծածկագրերով հողամասերի մի մասին՝ 1373.0քմ մակերեսով հողամասին տալ նոր հասցե՝ Կալինինի փողոց IV նրբ. թիվ 11/1:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում, ըստ Դիլիջանի համայնքի հողերի կադաստրային քարտեզի 110-022 և 110-014 ծածկագրերով հողամասերի մի մասի՝ 1343.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. Հունիսի 07
ք. Դիլի 1 ի ջ ա ն





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 հունիսի 2012թվականի N 198-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՔՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2011Թ. ՄԱՐՏԻ 2-Ի ԹԻՎ 142 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի փոփոխումն Դիլիջանի համայնքի ղեկավարի 2011թ. մարտի 2-ի “ԴԻԼԻՋԱՆԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 6/1 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ” թիվ 142 որոշման և ղեկավարվելով “Իրավական ակտերի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի 70 հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2011թ. մարտի 2-ի “ԴԻԼԻՋԱՆԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 6/1 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ” թիվ 142 որոշման մեջ կատարել փոփոխություն, մասնավորապես՝ “Թումանյան փողոցի թիվ 6/1” հասցեի փոխարեն կարդալ “Թումանյան փողոց թիվ 6/2”:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. հունիսի 08
ք.Դիլիջան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 հունիսի 2012 թվականի N 199-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2012Թ. ՀՈՒՆԻՍԻ 5-Ի ԹԻՎ 191 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2012թ. հունիսի 5-ի “Դիլիջանի Օրջոնիկիձե փողոցի թիվ 67/4 հասցեի 20.0քմ մակերեսով հողամասը քաղ. Կարեն Մանուկյանին կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին” թիվ 191 որոշման մեջ կատարվել է սխալ, մասնավորապես՝ “առևտրի սրահ”-ի փոխարեն գրվել է “ավտոտնակ”:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության “Իրավական ակտերի մասին” օրենքի 70 հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝


ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2012թ. հունիսի 5-ի “ Դիլիջանի Օրջոնիկիձե փողոցի թիվ 67/4 հասցեի 20.0քմ մակերեսով հողամասը քաղ. Կարեն Մանուկյանին կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին” թիվ 191 որոշման մեջ կատարել փոփոխություն, մասնավորապես՝ “ավտոտնակ”-ի փոխարեն կարդալ “առևտրի սրահ”:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐՄԵՆ ՍԱԼԹՐՈՍՅԱՆ

2012 թ. հունիսի 08
ք. Դիլիջան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 հունիսի 2012թվականի N 200-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012Թ. ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՏԵՂԱՇԱՐԺԻ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Դիլիջանի քաղաքային համայնքի 2012թ. բյուջեի 5 ամսվա գործունեության արդյունքները, անհրաժեշտություն է առաջացել վերանայել 2012թ. բյուջեի ծախսերի նախահաշիվներում որոշ հոդվածների տեղաշարժի և ֆինանսավորման ժամկետների հարցերը:
Հաշվի առնելով վերոգրյալը՝


ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի 2012թ.բյուջեով նախատեսված «Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ» /բաժին 8 խումբ 2 դաս 3/ հոդված 5113 ծախսերի նախահաշիվից կատարել տեղաշարժ 5000000 դրամ՝ որից
 - 1) «Այլ մշակութային կազմակերպություններ» /բաժին 8, խումբ 2, դաս 4, հոդված 5122/-750000 դրամ
 - 2) «Հանգիստ, մշակույթ և կրոն (այլ դասերին չպատկանող)» /բաժին 8, խումբ 6, դաս 1, հոդված 5112/-4250000 դրամ
2. Հանձնարարել ֆինանսական բաժնի պետ Գ.Դավթյանին կազմել համապատասխան եկամուտների և ծախսերի նախահաշիվների փոփոխությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. հունիսի 08
ք.Դիլիջան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Սյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
diliban1@yahoo.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 հունիսի 2012 թվականի N 201-Ա.


**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 20-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջան համայնքի քաղաքացիական պաշտպանության պլանը համաձայն հավելվածի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. հունիսի 08
ք. Դիլիջան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 հունիսի 2012 թվականի N 202-Ս

ԴԻԼԻՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 46 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀՈՂԱՍԱՍԻ
ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետին է դիմել քաղ. Մուշեղ Մկրտչի Սահաբալյանը՝ Առաջին փողոցի թիվ 46 հասցեի տնամերձ հողամասի սահմանները ճշտելու և հողհատկացման փաստաթղթային հիմքերը վերականգնելու խնդրանքով:

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ ըստ գույքագրման բյուրոյի կողմից տրված տեխնիկական անձնագրի, նշված տնամերձ հողամասի օրինական չափը 650.0քմ է: Վերջինիս կից փաստացի ավել օգտագործվում է 297.0քմ հողամաս, որի նկատմամբ Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի ուժով քաղ. Մուշեղ Սահաբալյանը ձեռք է բերում սեփականության իրավունք /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/: Նշված տնամերձ հողամասում առկա է բնակելի տան ինքնակամ կցակառուցումներ, որոնց շինարարական աշխատանքներն իրականացվել են մինչև 2001 թվականը /առկա է թաղային կոմիտեի տեղեկանքը/:

Նշված 297.0քմ հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ: Այսպիսով, Առաջին փողոցի թիվ 46 հասցեի բնակելի տան սպասարկման հողամասի չափը կազմում է 947.0քմ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64 հոդվածի 16 կետի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի պահանջներով՝


ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

- Վերականգնել Դիլիջանի Առաջին փողոցի թիվ 46 հասցեի բնակելի տան սպասարկման հողամասի հողհատկացման փաստաթղթային հիմքերը՝ 947.0քմ մակերեսով, քաղ. Մուշեղ Մկրտչի Սահաբալյանի /ծնված՝ 06.07.1952թ./ սեփականության իրավունքով:
- Տնամերձ հողամասում առկա բնակելի տան ինքնակամ կցակառուցումները համարել օրինական՝ ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 22.1 կետի համաձայն:
- Պարտավորեցնել քաղ. Մուշեղ Սահաբալյանին.

1) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում՝ նշված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

2) “Տեղական տուրքերի և վճարների մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. հունիսի 08
ք.Դիլիջան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
diliban1@yahoo.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 հունիսի 2012 թվականի N 203-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 120/1 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ
ՀՈՂԱՄԱՍԻ ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետին է դիմել քաղ. Ավագ Նարինյանի Մելյանը՝ Հակոբջանյան փողոցի թիվ 120/1 հասցեի տնամերձ հողամասի սահմանները ճշտելու և հողահատկացման փաստաթղթային հիմքերը վերականգնելու խնդրանքով:

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ ըստ գույքագրման բյուրոյի կողմից տրված տեխնիկական անձնագրի, նշված տնամերձ հողամասը բաղկացած է թվով երեք գույքային միավորներից, որոնց ընդհանուր մակերեսի օրինական չափը կազմում է 400.0քմ: Կատարված տեղագնման և չափագրման արդյունքում կազմված սխեմայի համաձայն նշված հողամասերի ընդհանուր մակերեսի փաստացի չափը կազմում է 515.0քմ /274.0քմ, 77.0քմ և 164քմ/: Վերջինիս կազմում փաստացի ավել օգտագործվում է 115.0քմ հողամաս, որի նկատմամբ Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի ուժով քաղ. Ավագ Մելյանը ձեռք է բերում սեփականության իրավունք /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/: Նշված տնամերձ հողամասում առկա է բնակելի տան ինքնակամ կցակառուցումներ, որոնց շինարարական աշխատանքներն իրականացվել են մինչև 2001 թվականը /առկա է թաղային կոմիտեի տեղեկանքը/:

Նշված 115.0քմ հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ: Այսպիսով, Հակոբջանյան փողոցի թիվ 120/1 հասցեի տնամերձ հողամասի ընդհանուր մակերեսի չափը կազմում է 515.0քմ /274.0քմ, 77.0քմ և 164.0քմ/:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության “Իրավական ակտերի մասին” օրենքի 75 հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64 հոդվածի 16 կետի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի համայնքի ղեկավարի 2011թ. հունվարի 21-ի “Առաջին պետական գրանցման աշխատանքների իրականացման շրջանակներում Դիլիջանի Հակոբջանյան փողոցի թիվ 120/1 հասցեի տնամերձ հողամասի գլխավոր հատակագիծը հաստատելու մասին” թիվ 35 որոշումը չեղյալ ճանաչել:

2. Վերականգնել Դիլիջանի Հակոբջանյան փողոցի թիվ 120/1 հասցեի բնակելի տան 515.0քմ ընդհանուր մակերեսով տնամերձ հողամասի հողհատկացման փաստաթղթային հիմքերը՝ 274.0քմ, 77.0քմ և 164.0քմ մակերեսներով, քաղ. Ավագ Նարինանի Մելյանի /ծնված՝ 04.01.1957թ./ սեփականության իրավունքով:

3. Քաղ. Ավագ Մելյանին պատկանող 77.0քմ հողամասին տրամադրել նոր հասցե՝ Հակոբջանյան փողոց թիվ 120/3, 164.0քմ հողամասին տրամադրել նոր հասցե՝ Հակոբջանյան փողոց թիվ 120/4, 274.0քմ հողամասը թողնել նախկին՝ Հակոբջանյան փողոց թիվ 120/1 հասցեով:

4. Տնամերձ հողամասում առկա բնակելի տան ինքնակամ կցակառուցումները համարել օրինական՝ ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 22.1 կետի համաձայն:

5. Պարտավորեցնել քաղ. Ավագ Մելյանին.

1) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում՝ նշված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

2) “Տեղական տուրքերի և վճարների մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 հունիսի 2012թվականի N 204-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 226-001 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԻ ՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառման և հողային հաշվեկշռի կազմման նպատակով, Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, 226-001 ծածկագրով հողամասի մի մասի՝ 2000.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ պետականորեն գրանցել համայնքի սեփականության իրավունքը /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված «Բնակավայրերի հողերի» 226-001 ծածկագրով հողամասի մի մասին՝ 2000.0քմ մակերեսով հողամասին տալ նոր հասցե՝ Մայաթ-Նովա փողոց թիվ 50/2:
2. Նշված 2000.0քմ հողամասն օրենքով սահմանված կարգով ընդգրկել Դիլիջանի քաղաքային համայնքի հողային ֆոնդի հաշվեկշռում՝ որպես «Բնակավայրերի հողերի» հասարակական կառուցապատման հողեր:
3. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում, ըստ Դիլիջանի համայնքի հողերի կադաստրային քարտեզի 226-001 ծածկագրով հողամասի մի մասի՝ 2000.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. հունիսի 12
ք. Դիլիջան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 հունիսի 2012 թվականի N 205-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 087-049 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԻ ՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, 087-049 ծածկագրով հողամասի մի մասի՝ 1500.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ պետականորեն գրանցել համայնքի սեփականության իրավունքը: Նշված հողամասը հանդիսանում է համայնքի սեփականությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի թիվ 1767-Ն որոշման, ըստ համայնքի կադաստրային քարտեզի ընդգրկված է «Բնակավայրերի հողերի» կազմում /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:


Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի 2-րդ պարբերության 1-ին կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված «Բնակավայրերի հողերի» 087-049 ծածկագրով հողամասի մի մասին՝ 1500.0քմ մակերեսով հողամասին տալ նոր հասցե՝ Անդրանիկի փողոց 3-րդ նրբ. թիվ 1/7:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում, ըստ Դիլիջանի համայնքի հողերի կադաստրային քարտեզի 087-049 ծածկագրով հողամասի մի մասի՝ 1500.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ



2012 թ. հունիսի 12
ք. Դիլիջան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 հունիսի 2012թվականի N 206-Ա


ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՔՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2012Թ. ՀՈՒՆԻՍԻ 5-Ի ԹԻՎ 192 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի փոփոխումն Դիլիջանի համայնքի ղեկավարի 2012թ. հունիսի 5-ի “Առաջին պետական գրանցման աշխատանքների իրականացման շրջանակներում Դիլիջանի Օրջոնիկիձե փողոցի 2-րդ նրբ. թիվ 7 հասցեի տնամերձ հողամասի գլխավոր հատակագիծը հաստատելու մասին ” թիվ 192 որոշման և ղեկավարվելով “Իրավական ակտերի մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի 70 հոդվածի 5-րդ մասի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի համայնքի ղեկավարի 2012թ. հունիսի 5-ի թիվ 192 որոշմանը կից տրամադրված հողամասի գլխավոր հատակագիծը համարել անվավեր:
2. Հաստատել Օրջոնիկիձե փողոցի 2-րդ նրբ. թիվ 7 հասցեի հողամասի փոփոխված գլխավոր հատակագիծը՝ 594.0քմ մակերեսով:
3. Դիլիջանի համայնքի ղեկավարի 2012թ. հունիսի 5-ի թիվ 192 որոշման մեջ կատարել փոփոխություն, որտեղ 624.0քմ-ի փոխարեն կարդալ 594.0քմ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. հունիսի 13
ք. Դիլիջան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 հունիսի 2012 թվականի N 207-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 141-001 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԻ ՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, 141-001 ծածկագրով հողամասի մի մասի՝ 20.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ պետականորեն գրանցել համայնքի սեփականության իրավունքը՝ վերջինս ընդգրկելով Բնակավայրերի հողերի բնակելի կառուցապատման հողերի կազմում: Նշված հողամասը հանդիսանում է համայնքի սեփականությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի թիվ 1767-Ն որոշման, ըստ համայնքի կադաստրային քարտեզի ընդգրկված է «Բնակավայրերի հողերի» կազմում /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված «Բնակավայրերի հողերի» 141-001 ծածկագրով հողամասի մի մասին՝ 20.0քմ մակերեսով հողամասին տալ նոր հասցե՝ Կալինինի փողոց թիվ 247/3:
2. Նշված 20.0քմ հողամասը ընդգրկել Բնակավայրերի հողերի բնակելի կառուցապատման հողերի ֆոնդում:
3. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում, ըստ Դիլիջանի համայնքի հողերի կադաստրային քարտեզի 141-001 ծածկագրով հողամասի մի մասի՝ 20.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

14 հունիսի 2012 թվականի N 208-Ս

ԱՌԱՋԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ
ԴԻԼԻՋԱՆԻ ՕՐՋՈՆԻԿԻՉԵ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 18 ՀԱՍՑԵԻ ՏՆԱՄԵՐԶ ՀՈՂԱՄԱՍԻ ԳԼԽԱՎՈՐ
ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետին է դիմել քաղ. Լյովա Ռաֆիկի Ալիխանյանը՝ Դիլիջանի Օրջոնիկիձե փողոցի թիվ 18 հասցեի, իր սեփականությունը հանդիսացող տնամերձ հողամասի սահմանները ճշտելու և հաստատված հատակագիծ տրամադրելու խնդրանքով:

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ ըստ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերի, նշված տնամերձ հողամասի չափը կազմում է 480.0քմ:
Կատարված տեղագնման և չափագրման արդյունքում կազմված սխեմայի համաձայն նշված հողամասի փաստացի չափը կազմում է 446.0քմ: Չափի փոփոխման հարցում քաղ. Լյովա Ալիխանյանը առարկություն չունի /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/: Նշված տնամերձ հողամասում առկա է բնակելի տան ինքնակամ կցակառուցումներ և ինքնակամ կառուցված օժանդակ շինություն, որոնց շինարարական աշխատանքներն իրականացվել են մինչև 2001 թվականը /առկա է թաղային կոմիտեի տեղեկանքը/:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1998թ. դեկտեմբերի 31-ի թիվ 867 որոշման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով “Տեղական ինքնակառավարման մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել Դիլիջանի Օրջոնիկիձե փողոցի թիվ 18 հասցեի տնամերձ հողամասի գլխավոր հատակագիծը՝ 446.0քմ մակերեսով, քաղ. Լյովա Ալիխանյանի սեփականության իրավունքով:
2. Տնամերձ հողամասում առկա բնակելի տան ինքնակամ կցակառուցումները և ինքնակամ կառուցված օժանդակ շինությունը համարել օրինական՝ ՀՀ կառավարության 18 մայիսի 2006թ. թիվ 912-Ն որոշման 22.1 կետի համաձայն:
3. Պարտավորեցնել Լյովա Ալիխանյանին.
 - 1) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ նշված անշարժ գույքի նկատմամբ

սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

2) “Տեղական տուրքերի և վճարների մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎՈՐ

ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. հունիսի 14
ք.Դիլիջան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հունիսի 2012թվականի N 209-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈՋԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ
ՓԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՋՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ


Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2012թվականի մայիսի 25-ի թիվ 49-Ա որոշումը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի 20-րդ հոդվածի 3-րդ մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Դիլիջանի քաղաքային համայնքում համայնքի ղեկավարի և ավագանու անդամների ընտրություններին մասնակցող թեկնածուների քարոզչական պատաստաները փակցնելու համար Դիլիջանի քաղաքային համայնքի տարածքում առանձնացնել անվճար տեղեր համաձայն կից աղյուսակի:

2. Սույն որոշման օրինակն ուղարկել Հայաստանի Հանրապետության Կենտրոնական ընտրական հանձնաժողով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. հունիսի 15
ք.Դիլիջան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

15 հունիսի 2012 թվականի N 210-Ա

ԱՌԱՋԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ
ԴԻԼԻՋԱՆԻ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 127 ՀԱՍՑԵԻ ՏՆԱՄԵՐԶ ՀՈՂԱՄԱՍԻ ԳԼԽԱՎՈՐ
ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն 2012թ. հունիսի 14-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի, Դիլիջանի Մյասնիկյան փողոցի թիվ 127 հասցեի բնակելի տան և տնամերձ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռք են բերել քաղաքացիներ Կարեն Գուրգենի Գրիգորյանը, և Արմեն Գուրգենի Գրիգորյանը: Վերջիններս դիմել են քաղաքապետին նշված տնամերձ հողամասի սահմանները ճշտելու և հաստատված հատակագիծ տրամադրելու խնդրանքով:

Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ ըստ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերի, նշված տնամերձ հողամասի չափը կազմում է 620.0քմ: Կատարված տեղագնման և չափագրման արդյունքում կազմված սխեմայի համաձայն նշված հողամասի ներկայիս փաստացի չափը կազմում է 557.0քմ: Չափի փոփոխման հարցում սեփականատերերն առարկություն չունեն /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/: Նշված տնամերձ հողամասում առկա է բնակելի տան ինքնակամ կցակառուցումներ և ինքնակամ կառուցված օժանդակ շինություններ, որոնց շինարարական աշխատանքներն իրականացվել են մինչև 2001 թվականը /առկա է թաղային կոմիտեի տեղեկանքը/:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1998թ. դեկտեմբերի 31-ի թիվ 867 որոշման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի պահանջներով՝


ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել Դիլիջանի Մյասնիկյան փողոցի թիվ 127 հասցեի տնամերձ հողամասի գլխավոր հատակագիծը՝ 557.0քմ մակերեսով, քաղաքացիներ Կարեն Գուրգենի Գրիգորյանի և Արմեն Գուրգենի Գրիգորյանի սեփականության իրավունքով:
 2. Տնամերձ հողամասում առկա բնակելի տան ինքնակամ կցակառուցումները և ինքնակամ կառուցված օժանդակ շինությունները համարել օրինական՝ ՀՀ կառավարության 18 մայիսի 2006թ. թիվ 912-Ն որոշման 22.1 կետի համաձայն:
 3. Պարտավորեցնել համասեփականատերերին.
- 1) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի

կադաստր պետական կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ նշված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

2) “Տեղական տուրքերի և վճարների մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. հունիսի 15
ք.Դիլիջան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 հունիսի 2012 թվականի N 211-Ս

**ԱՎԱԳ ՌՈՒՄԼԱՆԻ ԲԱԼԻՆՅԱՆԻՆ ԻՐ ՀՈՐ՝ ՌՈՒՄԼԱՆ ՌԱԶՄԻԿԻ ԲԱԼԻՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՍԲ
ՊԱՏՐՈՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Դիլիջանի քաղաքապետարան է դիմել Ավագ Ռուսլանի Բալինյանը հայտնելով, որ հայրը՝ Ռուսլան Ռազմիկի Բալինյանը, վատառողջ է, 2-րդ կարգի հաշմանդամ է և նրա խնամքը ինքն է իրականացնում: Քաղաքացին խնդրել է իրեն նշանակել Ռուսլան Ռազմիկի Բալինյանի նկատմամբ պատրոն (օգնական):

Ուսումնասիրությունից պարզվել է, որ Ռուսլան Ռազմիկի Բալինյանը վատառողջ է, հանդիսանում է 2-րդ կարգի հաշմանդամ, որի պատճառով չի կարողանում ինքնուրույն իրականացնել ու պաշտպանել իր իրավունքները, կատարել պարտականությունները և կարիք ունի պատրոնի (օգնականի):

Հաշվի առնելով այն, որ Ավագ Ռուսլանի Բալինյանը չափահաս, գործունակ է, բարոյական և անձնական այլ հատկանիշները բնութագրվում են դրական և հանդիսանում է Ռուսլան Ռազմիկի Բալինյանի որդին, իսկ Ռուսլան Ռազմիկի Բալինյանը տվել է իր համաձայնությունը, քանի որ կարիք ունի պատրոնի (օգնականի) և պատրոնած սահմանելը չի հանգեցնում քաղաքացու իրավունքների սահմանափակմանը՝ Դիլիջան համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովը տվել է իր դրական եզրակացությունը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 43 հոդվածի և <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 33 հոդվածի 2¹ մասի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1985թ. օգոստոսի 03-ին ծնված Ավագ Ռուսլանի Բալինյանին նշանակել 1952թ. հունվարի 05-ին ծնված Ռուսլան Ռազմիկի Բալինյանի նկատմամբ պատրոն (օգնական):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. հունիսի 18
ք. Դիլիջան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 հունիսի 2012 թվականի N 212-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 1997Թ.ՀՈՒԼԻՍԻ 04-Ի «ՄԻ ՇԱՐՔ ԿՈՄՈՒՆԱԼ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ
ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 217 ՈՐՈՇՄԱՆ ՍԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան է դիմել Սեդա Մաիլյանը, հայտնելով, որ Դիլիջանի քաղաքապետի 1997 թվականի հուլիսի 04-ի թիվ 217 որոշման մեջ սխալ է տեղի ունեցել. «Սեդա Անդրանիկի Մաիլյանի» փոխարեն գրվել է «Սեդա Անդրանիկի Մաիլյան», «Ալվարդ Ռաֆիկի Մաիլյանի» փոխարեն՝ «Ալվարդ Ռաֆիկի Մաիլյան» և «Մարիամ Դավիթի Բադալյանի» փոխարեն գրվել է «Մարիամ Դավիթի Դավթյան»: Քաղաքացին խնդրել է կատարել համապատասխան ուղղում:

Ուսումնասիրությունից պարզվել է, որ Դիլիջանի քաղաքապետի 1997 թվականի հուլիսի 04-ի «Մի շարք կոմունալ բնակարանների սեփականաշնորհման մասին» թիվ 217 որոշման մեջ վերոհիշյալ ազգանունները թուրմացաբար սխալ են գրվել:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Դիլիջանի քաղաքապետի 1997 թվականի հուլիսի 04-ի «Մի շարք կոմունալ բնակարանների սեփականաշնորհման մասին» թիվ 217 որոշման մեջ կատարել փոփոխություն՝ «Սեդա Անդրանիկի Մաիլյանի» փոխարեն գրել «Սեդա Անդրանիկի Մաիլյան», «Ալվարդ Ռաֆիկի Մաիլյանի» փոխարեն՝ «Ալվարդ Ռաֆիկի Մաիլյան» և «Մարիամ Դավիթի Դավթյանի» փոխարեն՝ «Մարիամ Դավիթի Բադալյան»:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. հունիսի 19
ք. Դիլիջան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 հունիսի 2012 թվականի N 213-Ս

ԴԻԼԻՋԱՆԻ ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 62/1 ՀԱՍՑԵԻ 477.0ՔՄ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՆՈՐ ՀԱՍՑԵ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ


Համաձայն 2012 թ. ապրիլի 2-ի ըստ կտակի ժառանգության իրավունքի վկայագրի՝ Դիլիջանի Արուսյան փողոցի թիվ 62/1 հասցեի 477.0քմ հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռք է բերել քաղ. Սպարտակ Նորայրի Մարտիրոսյանը: Վերջինս դիմել է Դիլիջանի քաղաքապետին՝ նշված 477.0քմ հողամասին նոր հասցե տրամադրելու խնդրանքով:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով “Տեղական ինքնակառավարման մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Արուսյան փողոցի թիվ 62/1 հասցեի 477.0քմ հողամասին տրամադրել նոր հասցե՝ Արուսյան փողոց թիվ 62/2:
2. Պարտավորեցնել քաղ. Սպարտակ Մարտիրոսյանին.
“Տեղական տուրքերի և վճարների մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011 թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. հունիսի 19
ք. Դիլիջան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 հունիսի 2012թվականի N 214-Ս

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ 394-010
ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՄԻ ՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԸ ՊԵՏԱԿԱՆՈՐԵՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիկ հաշվառման և հողային հաշվեկշռի կազմման նպատակով, Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, 394-010 ծածկագրով հողամասի մի մասի՝ 346.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ պետականորեն գրանցել համայնքի սեփականության իրավունքը /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56 հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38 հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում ընդգրկված «Բնակավայրերի հողերի» 394-010 ծածկագրով հողամասի մի մասին՝ 346.0քմ մակերեսով հողամասին տալ պայմանական հասցե՝ Երևան-Դիլիջան մայրուղի կմ 85+220:
2. Նշված 346.0քմ հողամասն օրենքով սահմանված կարգով ընդգրկել Դիլիջանի քաղաքային համայնքի հողային ֆոնդի հաշվեկշռում՝ որպես «Բնակավայրերի հողերի» հասարակական կառուցապատման հողեր:
3. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում, ըստ Դիլիջանի համայնքի հողերի կադաստրային քարտեզի 394-010 ծածկագրով հողամասի մի մասի՝ 346.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. հունիսի 19
ք. Դիլիջան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilibjan1@yahoo.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 հունիսի 2012թվականի N 215-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ԳԵՏԱՓՆՅԱ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 80/1 ՀԱՍՑԵԻ 20.0ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂ.
ՎԱԶԱԳԱՆ ՄԱՆԹԱՇՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքապետարան է դիմել քաղ. Վաչագան Մառլենի Մանթաշյանը՝ Գետափնյա փողոցի թիվ 80/1 հասցեի 20.0քմ հողամասը, ավտոտնակ կառուցելու նպատակով, կառուցապատման իրավունքով իրեն տրամադրելու խնդրանքով:

Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ Գետափնյա փողոցի թիվ 80/1 հասցեի 20.0քմ հողամասը, ըստ հողի նպատակային նշանակության, գտնվում է համայնքի “Բնակավայրերի հողերի” կազմում: Նշված հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցված է /սեփականության վկայական 18062012-11-0031/:

Հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին, Գետափնյա փողոցի թիվ 80/1 հասցեի 20.0քմ հողամասը, կառուցապատման իրավունքով, 20 տարի ժամկետով տրամադրել քաղ. Վաչագան Մանթաշյանին:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. ապրիլի 27-ի թիվ 844-Ն որոշման, Դիլիջան համայնքի ավագանու 2009թ. ապրիլի 28-ի թիվ 72-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության “Տեղական ինքնակառավարման մասին” օրենքի 32-րդ հոդվածի 12-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի Գետափնյա փողոցի թիվ 80/1 հասցեի 20.0քմ հողամասը, ավտոտնակ կառուցելու նպատակով, կառուցապատման իրավունքով, տարեկան 20 000 դրամ վճարի չափով, 20 տարի ժամկետով տրամադրել քաղ. Վաչագան Մանթաշյանին:

2. Քաղաքացու հետ կնքել հողի կառուցապատման իրավունքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման: Երկամյա ժամկետում պետական գրանցում չկատարելու դեպքում սույն որոշումը չեղյալ է ճանաչվում:

3. Տրամադրվող հողամասի կառուցապատման նպատակով, քաղաքացուն տրամադրել ճարտարապետահատակագծային առաջադրանք:

4. Պարտավորեցնել քաղ. Վաչագան Մանթաշյանին.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilibjan1@yahoo.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 հունիսի 2012թվականի N 216-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿՈՒ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1/1 ՀԱՍՑԵԻ 20.0ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ
ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂ. ԳՐԻԳՈՐ ՕԴԱԲԱՇՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքապետարան է դիմել քաղ. Գրիգոր Օդաբաշյանը՝ Մաքսիմ Գորկու փողոցի թիվ 1/1 հասցեի 20.0քմ հողամասը, առևտրի սրահ կառուցելու նպատակով, կառուցապատման իրավունքով իրեն տրամադրելու խնդրանքով:

Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ Մաքսիմ Գորկու փողոցի թիվ 1/1 հասցեի 20.0քմ հողամասը, ըստ հողի նպատակային նշանակության, գտնվում է համայնքի «Բնակավայրերի հողերի» կազմում: Նշված հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցված է /սեփականության վկայական 18062012-11-0030/:

Հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին, Մաքսիմ Գորկու փողոցի թիվ 1/1 հասցեի 20.0քմ հողամասը, կառուցապատման իրավունքով, 20 տարի ժամկետով տրամադրել քաղ. Գրիգոր Օդաբաշյանին:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. ապրիլի 27-ի թիվ 844-Ն որոշման, Դիլիջան համայնքի ավագանու 2009թ. ապրիլի 28-ի թիվ 72-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 32-րդ հոդվածի 12-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի Մաքսիմ Գորկու փողոցի թիվ 1/1 հասցեի 20.0քմ հողամասը, առևտրի սրահ կառուցելու նպատակով, կառուցապատման իրավունքով, տարեկան 20 000 դրամ վճարի չափով, 20 տարի ժամկետով տրամադրել քաղ. Գրիգոր Օդաբաշյանին:
2. Քաղաքացու հետ կնքել հողի կառուցապատման իրավունքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման: Երկամսյա ժամկետում պետական գրանցում չկատարելու դեպքում սույն որոշումը չեղյալ է ճանաչվում:
3. Տրամադրվող հողամասի կառուցապատման նպատակով, քաղաքացուն տրամադրել ճարտարապետահատակագծային առաջադրանք:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 հունիսի 2012թվականի N 217-Ս

ԴԻԼԻՋԱՆԻ ՕՐԶՈՆԻԿԻԶԵ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 67/1 ԵՎ ԹԻՎ 67/4 ՀԱՍՑԵՆԵՐԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ
ՏԱԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքապետարան է դիմել քաղ. Կարեն Մանուկյանը՝ կառուցապատման իրավունքով իրեն տրամադրված Օրջոնիկիձե փողոցի թիվ 67/1 հասցեի 20.0քմ և Օրջոնիկիձե փողոցի 67/4 հասցեի հողամասերը միավորելու համաձայնություն ստանալու խնդրանքով:

Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ նշված հողամասերի միավորումով չի խախտվում այդ տարածքում նախատեսված կառուցապատման քաղաքաշինական ամբողջական լուծման պայմանները:

Դիլիջանի Օրջոնիկիձե փողոցի թիվ 67/1 հասցեի 20.0քմ հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրվել է քաղ. Կարեն Մանուկյանին Դիլիջանի քաղաքապետի 2007թ. ապրիլի 20-ի թիվ 364 որոշմամբ, տաս տարի ժամկետով: Դիլիջանի Օրջոնիկիձե փողոցի թիվ 67/4 հասցեի 20.0քմ հողամասը կառուցապատման իրավունքով տրամադրվել է քաղ. Կարեն Մանուկյանին Դիլիջանի համայնքի ղեկավարի 2012թ. հունիսի 5-ի թիվ 191 որոշմամբ, քսան տարի ժամկետով:

Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել քաղաքապետին նշված հողամասերի միավորելու դեպքում նույնացնել հողամասերի օգտագործման ժամկետները, որից ելնելով Օրջոնիկիձե փողոցի թիվ 67/1 հասցեի 20.0քմ հողամասի օգտագործման ժամկետը անհրաժեշտ է երկարաձգել մինչև 2031թ. հունիսի 12-ը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 97 հոդվածի, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 466 հոդվածի 1-ին կետի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Տալ համաձայնություն քաղ. Կարեն Մանուկյանին կառուցապատման իրավունքով տրամադրված Օրջոնիկիձե փողոցի թիվ 67/1 հասցեի 20.0քմ և Օրջոնիկիձե փողոցի թիվ 67/4 հասցեի 20.0քմ մակերեսներով հողամասերի միավորմանը:
2. Միավորված 40.0քմ հողամասին տրամադրել նոր հասցե՝ Օրջոնիկիձե փողոց թիվ 67/1:
3. Օրջոնիկիձե փողոց թիվ 67/1 հասցեի 40.0քմ հողամասի վարձավճարի չափ սահմանել



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հունիսի 2012թվականի N 218-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՄՈԼԴՈՎԱԿԱՆ ՓՈԴՈՑԻ ԹԻՎ 7/1 ՀԱՍՑԵԻ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎՈՂ
ՀՈՂԱՄԱՍԻՆ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի սեփականությունը հանդիսացող Մոլդովական փողոցի թիվ 7/1 հասցեի 3.3հա հողամասից առանձնացվում է 1.0116հա հողամաս, որի արդյունքում անհրաժեշտություն է առաջացել առանձնացվող հողամասին տրամադրել նոր հասցե:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Դիլիջանի համայնքի սեփականությունը հանդիսացող, Մոլդովական փողոցի թիվ 7/1 հասցեի 3.3հա հողամասից առանձնացվող 1.0116հա հողամասին տրամադրել նոր հասցե՝ Մոլդովական փողոց թիվ 7/2, մնացած 2.2884հա հողամասը թողնել նախկին՝ Մոլդովական փողոց թիվ 7/1 հասցեով:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. հունիսի 20
ք. Դիլիջան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հունիսի 2012 թվականի N 219-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ԳԱՅԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 80/6 ՀԱՍՑԵԻ 31.0ՔՄ ՀՈՂԱՄԱՍՆ ԸՆԴՀԱՅՆՄԱՆ ԿԱՐԳՈՎ
ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերի տվյալների համաձայն՝ սեփականության իրավունքի վկայական թիվ 2052162, տրված 06.02.2008թ., Դիլիջանի Գայի փողոցի թիվ 80/1 հասցեի խանութը 70.0քմ սպասարկման հողամասով պատկանում է քաղ. Թելման Սամվելի Նազանյանին: Վերջինս դիմել է քաղաքապետարան՝ նշված խանութի պասարկման հողամասին կից գտնվող, Գայի փողոցի թիվ 80/6 հասցեի 31.0քմ հողամասը ընդլայնման կարգով իրեն օտարելու խնդրանքով:

Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ նշված հողամասի օտարումն աճուրդային կարգով կխոչընդոտի անձի իրավունքը և օրենքով պահպանվող շահերը, այն նպատակահարմար է օտարել ընդլայնման կարգով, նշված խանութի սեփականատեր Թելման Նազանյանին: Վերոգրյալ 31.0քմ հողամասը չի համարվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով առաջադրված հողամաս, չի գտնվում ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է Բնակավայրերի հողերի տարածագնահատման տասներորդ գոտում: Նշված 31.0քմ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը գրանցված է և տրված է սեփականության վկայական թիվ 04062012-11-0053: Համայնքի ավագանին 2012թ. հունիսի 8-ի թիվ 92 որոշմամբ համաձայնություն է տվել նշված 31.0քմ հողամասն ընդլայնման կարգով քաղ. Թելման Նազանյանին օտարելու վերաբերյալ համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003թ. մայիսի 8-ի թիվ 714-Ն որոշման 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66 հոդվածի պահանջները և ղեկավարվելով “Տեղական ինքնակառավարման մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի 12-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

- Դիլիջանի Գայի փողոցի թիվ 80/1 հասցեի խանութի սպասարկման հողամասին կից գտնվող, Գայի փողոցի թիվ 80/6 հասցեի 31.0քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով /ընդլայնման կարգով/ օտարել քաղ. Թելման Նազանյանին: Հողամասի արժեքը կազմում է 38502 դրամ:
- Քաղաքացու հետ կնքել հողի առքուվաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական

վավերացման, իսկ պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման:

3. Պարտավորեցնել քաղ. թելման Նազանյանին.

1) Դիլիջանի քաղաքապետարանի 900405051104 հաշվարկային հաշվին մուծել հողամասի կադաստրային արժեքը՝ 38502 դրամ, վերջինիս մուծման անդորրագիրը սույն որոշման անբաժանելի մասն է:

2) “Տեղական տուրքերի և վճարների մասին” Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԳԱՎՈՐ



ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. հունիսի 20
ք. Դիլիջան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հունիսի 2012 թվականի N 220-Ա

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐ ԵՎ ՕՒԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔ ՎԱՃԱՌԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԸ ԲԱՎԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքային համայնքի վարչական տարածքում գործող անհատ ձեռնարկատեր Ռոզա Մարիբեկյանը, հայտ է ներկայացրել քաղաքապետարան՝ իր սեփական ձեռնարկատիրական օբյեկտում ոգելից խմիչքներ և ծխախոտի արտադրանք վաճառելու թույլտվություն ստանալու համար:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ սահմանված կարգը և ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի գ) ենթակետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 հունիսի 2012 թվականի N 220 Ա

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐ ԵՎ ՕՒԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔ ՎԱՃԱՌԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Բավարարել հայտը և Ռոզա Մարիբեկյան անհատ ձեռնարկատերին տալ ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանք վաճառելու թույլտվություն 01 ապրիլի 2012 թ.-ից մինչև 31 դեկտեմբերի 2012 թ. ժամանակահատվածի համար:

2. Հանձնարարել քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնին, որն ստանալու է տուրքի գանձումները կատարել յուրաքանչյուր եռամսյակի համար՝ ըստ Դիլիջանի քաղաքային համայնքի ավագանու 2011 թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշմամբ հաստատված՝ հուլիսի 1-ի դրությամբ չափերի: Կարգը և ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի գ) ենթակետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

Բավարարել հայտը և Ռոզա Մարիբեկյան անհատ ձեռնարկատերին տալ ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանք վաճառելու թույլտվություն 01 ապրիլի 2012 թ.-ից մինչև 31 դեկտեմբերի 2012 թ. ժամանակահատվածի համար:

2. Հանձնարարել քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական բաժնին, որն ստանալու է տուրքի գանձումները կատարել յուրաքանչյուր եռամսյակի համար՝ ըստ Դիլիջանի քաղաքային համայնքի ավագանու 2011 թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշմամբ հաստատված՝ հուլիսի 1-ի դրությամբ չափերի:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հունիսի 2012թվականի N 221-Ա

**ՔԱՂ. ԳԱԳԻԿ ԱՂԱԶԱՆՅԱՆԻ, ԴԻԼԻՋԱՆԻ ՕՐԶՈՆԻԿԻԶԵ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 77/1 ՀԱՍՑԵԻ
ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Քաղաքապետարան է դիմել քաղ. Գագիկ Ժորայի Աղաջանյանը՝ Օրջոնիկիձե փողոցի թիվ 75ա հասցեում, իր կողմից կառուցված բնակելի տան և վերջինիս սպասարկման հողամասի իրավական կարգավիճակի որոշման խնդրանքով:

Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ Դիլիջանի Օրջոնիկիձե փողոցի թիվ 75ա հասցեում քաղ. Գագիկ Աղաջանյանի կողմից կառուցվել է բնակելի տուն դեռևս 1980-ական թվականներին /առկա է թաղային կոմիտեի տեղեկանքը/, որի շինարարության թույլտվության, ինչպես նաև զբաղեցրած հողամասի հատկացման փաստաթղթային հիմքերը պահպանված չեն: Նշված բնակելի տան տվյալները չեն հակասում քաղաքաշինական նորմերին, զբաղեցրած հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը փաստացի զբաղեցնում է 400.0քմ հողամաս, որի նկատմամբ քաղաքացին ձեռք է բերում սեփականության իրավունք Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի ուժով /կցվում է հողամասի գլխավոր հատակագիծը/: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության 2008թ. հունիսի 10-ի թիվ ՀՕ-117-Ն օրենքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. նոյեմբերի 13-ի թիվ 1328-Ն որոշման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Քաղ. Գագիկ Աղաջանյանի կողմից, Օրջոնիկիձե փողոցի թիվ 75ա հասցեում կառուցված բնակելի տանը և 400.0քմ հողամասին տրամադրել նոր հասցե՝ Օրջոնիկիձե փողոց թիվ 77/1:
2. Օրջոնիկիձե փողոցի թիվ 75ա հասցեի բնակելի տունը և 400.0քմ հողամասը համարել քաղ. Գագիկ Ժորայի Աղաջանյանի /ծնված 05.05.1957թ./ սեփականությունը:
3. Պարտավորեցնել քաղ. Գագիկ Աղաջանյանին.
 - 1) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ նշված անշարժ գույքի նկատմամբ

սեփականության իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:

2) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԳԱՎԱՐ



ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. հունիսի 22
ք.Դիլիջան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
diliban1@yahoo.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հունիսի 2012թվականի N 222-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ԿԱԼԻՆԻՆԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 247/3 ՀԱՍՑԵՒ 20.0ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ
ՔԱՂ. ՍՈՒՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴԵՐԼՈՒ
ՄԱՍԻՆ

Քաղաքապետարան է դիմել քաղ. Սուրեն Արփիարի Հովհաննիսյանը՝ Կալինինի փողոցի թիվ 247/3 հասցեի 20.0քմ հողամասը, ավտոտնակ կառուցելու նպատակով, կառուցապատման իրավունքով իրեն տրամադրելու խնդրանքով:

Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ Կալինինի փողոցի թիվ 247/3 հասցեի 20.0քմ հողամասը, ըստ հողի նպատակային նշանակության, գտնվում է համայնքի «Բնակավայրերի հողերի» կազմում: Նշված հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցված է /սեփականության վկայական թիվ 22062012-11-0066/:

Հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին, Կալինինի փողոցի թիվ 247/3 հասցեի 20.0քմ հողամասը, կառուցապատման իրավունքով, 20 տարի ժամկետով տրամադրել քաղ. Սուրեն Հովհաննիսյանին:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. ապրիլի 27-ի թիվ 844-Ն որոշման, Դիլիջան համայնքի ավագանու 2009թ. ապրիլի 28-ի թիվ 72-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 12-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի Կալինինի փողոցի թիվ 247/3 հասցեի 20.0քմ հողամասը, ավտոտնակ կառուցելու նպատակով, կառուցապատման իրավունքով, տարեկան 20000 դրամ վճարի չափով, 20 տարի ժամկետով տրամադրել քաղ. Սուրեն Հովհաննիսյանին:


2. Քաղաքացու հետ կնքել հողի կառուցապատման իրավունքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման: Երկամյա ժամկետում պետական գրանցում չկատարելու դեպքում սույն որոշումը չեղյալ է ճանաչվում:

3. Տրամադրվող հողամասի կառուցապատման նպատակով, քաղաքացուն տրամադրել ճարտարապետահատակագծային առաջադրանք:

4. Պարտավորեցնել քաղ. Սուրեն Հովհաննիսյանին.

- 1) Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի Դիլիջանի ստորաբաժանում՝ նշված հողամասի նկատմամբ կառուցապատման իրավունքը պետականորեն գրանցելու նպատակով:
- 2) Ավտոտնակի կառուցման նախագծային փաստաթղթերը կազմել Դիլիջանի համայնքի ղեկավարի կողմից հաստատված ճարտարապետահատակագծային առաջադրանքի պահանջներին համապատասխան և սահմանված ժամկետում:
- 3) «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և համայնքի ավագանու 2011թ. հոկտեմբերի 28-ի թիվ 208-Ն որոշման համաձայն կատարել համապատասխան վճարումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

2012 թ. հունիսի 22
ք. Դիլիջան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիլիջանի քաղաքային համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք.Դիլիջան, Մյասնիկյան 55 (+374 268) 2-25-85
dilijan1@yahoo.com

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հունիսի 2012թվականի N 223-Ա

ԴԻԼԻՋԱՆԻ ՇԱՄԱԽՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 3Ա/13 ՀԱՍՑԵԻ 20.0ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂ. ԳՈՒՐԳԵՆ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքապետարան է դիմել քաղ. Գուրգեն Ղազարյանը՝ Շամախյան փողոցի թիվ 3ա/13 հասցեի 20.0քմ հողամասը, ավտոտնակ կառուցելու նպատակով, կառուցապատման իրավունքով իրեն տրամադրելու խնդրանքով:

Քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ Շամախյան փողոցի թիվ 3ա/13 հասցեի 20.0քմ հողամասը, ըստ հողի նպատակային նշանակության, գտնվում է համայնքի «Բնակավայրերի հողերի» կազմում: Նշված հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը պետականորեն գրանցված է /սեփականության վկայական թիվ 19062012-11-0066/:

Հանձնաժողովը առաջարկություն է ներկայացրել համայնքի ղեկավարին, Շամախյան փողոցի թիվ 3ա/13 հասցեի 20.0քմ հողամասը, կառուցապատման իրավունքով, 20 տարի ժամկետով տրամադրել քաղ. Գուրգեն Ղազարյանին:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. ապրիլի 27-ի թիվ 844-Ն որոշման, Դիլիջան համայնքի ավագանու 2009թ. ապրիլի 28-ի թիվ 72-Ն որոշման պահանջները և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 12-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Դիլիջանի Շամախյան փողոցի թիվ 3ա/13 հասցեի 20.0քմ հողամասը, ավտոտնակ կառուցելու նպատակով, կառուցապատման իրավունքով, տարեկան 20000 դրամ վճարի չափով, 20 տարի ժամկետով տրամադրել քաղ. Գուրգեն Ղազարյանին:
2. Քաղաքացու հետ կնքել հողի կառուցապատման իրավունքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման: Երկամյա ժամկետում պետական գրանցում չկատարելու դեպքում սույն որոշումը չեղյալ է ճանաչվում:
3. Տրամադրվող հողամասի կառուցապատման նպատակով, քաղաքացուն տրամադրել ճարտարապետահատակագծային առաջադրանք:

